

# Ձախ շրջադարձեր

A-ից B ճանապարհը ինքն իրեն չհատող բեկյալ գիծ է: Աշոտն այդ ճանապարհով գնալիս սկսեց հաշվել ձախ շրջադարձերի քանակը, բայց շուտով ծանծրացավ: Օգնեք նրան հաշվելու A-ից B ճանապարհի ձախ շրջադարձերի քանակը:

## Մուտքը

Մուտքի առաջին տողում գրված է մեկ թիվ՝ բեկյալի գագաթների N քանակը ( $2 \leq N \leq 100$ ): Հաջորդ N տողերում տրված են բեկյալի գագաթների (x, y) կոորդինատները, բոլոր կոորդինատներն ամբողջ թվեր են և մոդուլով չեն գերազանցում  $10^6$ -ը:

## Ելքը

Ելքային ֆայլում հարկավոր է արտածել մեկ թիվ՝ ձախ շրջադարձերի քանակը:

## Օրինակ

Մուտքը.

5

2 0

2 2

3 3

3 -1

5 -1

Ելքը.

1